ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ և ԽՍՀՄ վաստակավոր շինարար Արարատ Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բագրատունյաց փողոցի հ.34Ա հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արարատ Սահակյանը ծնվել է 1930 թվականի հուլիսի 21-ին Սիսիանի շրջանի Սալվարդ գյուղում: Սովորել է ծննդավայրի դպրոցում՝ ստանալով 6-ամյա կրթություն:

1946 թվականին ընտանիքով տեղափոխվել է Երևան՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Նույն թվականին ընդունվել է աշխատանքի «Հայսնունդարտշինտրեստում» որպես ատաղձագործի օգնական: 1947 թվականի հունվարին ստացել է 6-րդ կարգի ատաղձագործի որակավորում:

1964 թվականին աշխատանքի է ընդունվել է «Հայքիմշին» տրեստում որպես մոնտաժ անող:

1965 թվականին կառուցել է «Երքիմշին» տրեստի բազմաբնակարան շենքը /հասցե՝ Բագրատունյաց փող.34Ա/, որտեղ հետագայում բնակվել է նրա ընտանիքը:

1967 թվականին ստացել է 6-րդ կարգի մոնտաժ անողի որակավորում:

1970 թվականին նույն տրեստում նշանակվել է կոմպլեքսային բրիգադի բրիգադավար:

1970-2000 թվականներին իր բրիգադով մասնակցել է երևան քաղաքի խոշոր ճարտարապետական կառույցների կառուցմանը, որոնք են՝

1) Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի բոլոր կայարանները,
2) Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը,
3) Երևանի «Ռոսիա» կինոթատրոնը,
4) Արդյունաբերական խոշոր գործարաններ՝ թվով 12,
5) Բազմաբնակարան շենքեր՝ թվով 28:

1987 թվականին երկարատև և բարեխիղճ աշխատանքի համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» շքանշանով:

1988 թվականին ներկայացվել է «Աշխատանքային հերոս» բարձր կոչմանը, սակայն ԽՍՀՄ-ի փլուզման պատճառով չի իրականացվել:

Արարատ Սահակյանն իր ղեկավարած շինարարական բրիգադով աշխատել է հայտնի ճարտարապետներ Արթուր Թարխանյանի, Հրաչյա Պողոսյանի, Սպարտակ Խաչիկյանի, Սաշուլ Թալաշյանի հետ, որոնք շատ բարձր են գնահատել նրա աշխատանքը:

Արարատ Սահակյանը մահացել է 2013 թվականին:

Արարատ Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բագրատունյաց փողոցի հ.34Ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա որդու՝ Արմեն Սահակյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Արարատ Սահակյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ